# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Գշ. 1 Մարտ – Ուր. 4 Մարտ. — Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ իրենց անդրանիկ Ս. Պատարագները մատուցին յաջորդաբար Միաբանութեան նորընծայ Հայրերէն Հոգշ. Տ. Եղնիկ Արղ. Զախտարեան, Հոգշ. Տ. Ծիրայր Արղ. Թաշճեան, Հոգշ. Տ. Փառէն Արղ. Աւետիքեան և Հոգշ. Տ. Վրթանէս Արղ. Գալայճեան։

● Ուր. 4 Մարտ. — Ս. Թէոդորոսի տօնին նախատօնակը պաշտուեցաւ Մայրավանքիս համանուն եկեղեցւոյ մէջ (Ձեռագրաց Մատենադարան Ս. Աթոռոյ)։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեան։

● Շբ. 5 Մարտ. — Ս. Թէոդորոսի զօրավարին: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Թէոդորոս եկեղեցւոյ մէջ։ Պատարագիչն էր նորընծաներու վարժիչն ու ուսուցիչը՝ Հոգշ. Տ. Լևոն Արղ. Աբէլեան։ Ըստ սովորութեան, նորընծայք կը սպասարկէին Ս. Խորհուրդին։

— Կէսօրէ վերջ, վաղուան Արտաքսման կիրակիի առթիւ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար՝ ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն և նախատօնակ՝ մեր վերնամատրան մէջ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափոր Տաճարէն ներս։ Թափորապետն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ.։

● Կիր. 6 Մարտ. — Արտաքսման: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Դաւիթ Արղ.։ Ապա կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափոր Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոսի։

● Եշ. 10 Մարտ. — Իրիկուան «Հսկում»ին քարոզեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., յորդորելով հաւատացեալները որ Մեծ Պահոց այս օրերուն մանաւանդ զբաղուին քրիստոնէական երեք մեծ առաքինութիւններով — Հաւատքով, Յոյսով և Սիրով։

● Շբ. 12 Մարտ. — Ս. Կիւրղի Երուսաղիմայ հայրապետի տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան մէջ, Ս. Կիւրղի սեղանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբիկեան։ Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Մայր Տաճարի գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատրիարքի շիրմին վրայ, անոր անուան տօնին առթիւ։

● Կիր. 13 Մարտ. — Անառակին: Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղամ Արղ. Զաքարեան։ Քարոզեց Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան, բնաբան ունենալով օրուան Ճաշու Աւետարանէն «Հայր, մեղայ յերկինս և առաջի քո» և յայտնելով թէ բարեգութն Աստուած կը ներէ մեզի երբ մենք քաջութիւնը ունենանք մեղայ ըսելու։ Ըսաւ թէ փորձութիւնները յաճախ, ինչպէս Անառակին՝ նոյնպէս ալ մեր կեանքին մէջ, ապաշխարութեան և զղջումի հրաւէրներ են։ Երանի՜ անոնց՝ որոնք պատրաստ են ընդառաջելու այդ հրաւէրին։

● Եշ. 17 Մարտ. — Իրիկուան «Հսկում»ին քարոզեց Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան, «Զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր» բնաբանով։ Ցոյց տուաւ թէ Դաւիթ մարգարէին այս յայտարարութիւնը կը հաստատուէր իր որդիին՝ Սողոմոն իմաստունի սա նշանաւոր խօսքով. «Սկիզբն իմաստութեան՝ երկիւղ Տեառն»։ Ուստի ով որ Աստուծոյ վախը կը ճանչնայ՝ իմաստուն է, և ով որ իմաստուն է՝ սխալ բաներ չի կամենար այլ ուղիղ, և Աստուած կը կատարէ զանոնք։ Իսկ, հակառակ կողմէն, եթէ Աստուած չի կատարեր մեր կամքը, այդ ըսել է թէ մենք չունինք Աստուծոյ երկիւղովը պայմանաւոր ճշմարիտ իմաստութիւնը և անկէ բխող ուղիղ փափաքները։

● Կիր. 20 Մարտ. — Տնտեսին: Փակեալ-խորանի Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ։ Պատարագիչն էր Հոգշ. Տ. Վրթանէս Արղ. Գալայճեան։ Քարոզեց Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բաբիլուեան, որ անդրադառնալով օրուան տօնին ըսաւ թէ Աւետարանի Տնտեսին նման մեզմէ ալ օր մը հաշիւ պիտի պահանջուի մեր երկնաւոր Տիրոջմէն մեր գործած այն մեղքերուն համար՝ որոնց ջնջումը չենք աղաչած անկեղծ զղջումով, ջերմեռանդ աղօթքով ու պահեցողութեամբ։

● Եշ. 24 Մարտ. — Իրիկուան «Հսկում»ին քարոզեց Գերշ. Տ. Ասողիկ Եպս. Ղազարեան, «Առաքեա, Տէր, զլոյս քո և զճշմարտութիւն քո...» բնաբանով։ Ըսաւ թէ Սաղմոսերգուին նման բոլոր մարդիկ փնտռած են այդ լոյսը՝ որ նոյնինքն Քրիստոս է՝ որ ըսաւ. «Ես եմ լոյս աշխարհի»։

● Շբ. 26 Մարտ. — Կէսօրէ վերջ, վաղուան Դատաւորի կիրակիի առթիւ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար։ Ս. Գերեզմանի և Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, թափորը բարձրացաւ վերջնոյս կից Ս. Գրիգոր Լուսաւորչի հայապատկան եկեղեցին՝ ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն և նախատօնակ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափոր։

● Կիր. 27 Մարտ. — Դատաւորին: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Լուսաւորիչ։ Ապա, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեան մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և նախագահեց նոյնին և Պատանատեղւոյն շուրջ կատարուած եռադարձ մեծահանդէս թափորին՝ որ վերջացաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։

digitised by A.R.A.R.@

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● *Շբ. 5 Մարտ.* Կէսօրէ առաջ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և Գերշ. Տ. Ասողիկ Եպս. վանական գործերով ներկայացան Վսեմ. Կառավարչին։

● *Դշ. 9 Մարտ.* — Ընդառաջելով վերջնոյս հրաւէրին, Գերշ. Սրբազանները նոյն խնդրով զարձեալ ներկայացան Կառավարչատուն։

● *Ուր. 11 Մարտ.* — Ս. Յարութեան Տաճարի յունաց բազմամեայ Տեսուչ Արքիմանտրիթ Քիրիաքոսի մահուան առիթով, Յունաց Պատրիարքարանի Ս. Կոստանդիանոս Տաճարին մէջ տեղի ունեցած թաղման կարգին ներկայ եղան Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ.ը Ս. Յարութեան Տաճարի Տեսուչ Հոգշ. Տ. Լեւոն Արղ., Աւագ Թարգման Հոգշ. Տ. Յուսիկ Արղ., Հոգշ. Տ. Տ. Գեղամ, Ժիրայր, Փառէն և Վրթանէս աբեղաներ, ինչպէս նաև Տիար Կ. Հինդլեան։ — Յուղարկաւորութեան թափօրի մեր Մայրավանքի դրան առջեւէն անցնելուն, մեր կողմէ կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ՝ հանդիսապետութեամբ Գերշ. Տ. Ասողիկ Եպս.ի և մասնակցութեամբ Հոգշ. Հայրերու։ — Այս տխուր առիթով, յանուն Պատրիարքարանիս, ղրկուած էր նաև ծաղկեպսակ մը։

● *Գշ. 15 Մարտ.* — Կէսօրէ առաջ, քաղաքիս Ամերիկեան Նոր Ընդհ. Հիւպատոս Պր. Էրիք Ս. Վէնտլին, հետն ունենալով փոխ Ընդհ. Հիւպատոս Պր. Քինտօլվինկը, իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Պատրիարքարանիս։

● *Դշ. 16 Մարտ.* — Կէսօրին, քաղաքիս Լիբանանեան Ընդհ. Հիւպատոս Պր. Ֆարիտ Սթէֆան իր մեկնման առիթով հրաժեշտի այցելութիւն տուաւ Պատրիարքարանիս։

● *Ուր. 18 Մարտ.* — Կէսօրէ առաջ, Գերշ Տ. Սուրէն Արքեպս., ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Յուսիկ Արղ.ի և Տիար Կ. Հինդլեանի, փոխ այցելութիւն տուաւ Ամերիկեան Նոր Հիւպատոսին։

## ՄԻԱԲԱՆԱԿԱՆՔ

Պատ. Տնօրէն Ժողովոյ կողմէ կատարուեցան պաշտօնէական հետեւեալ նշանակումները.

Ժառ. Վարժարանի և Ընծայարանի առժ. Տեսուչ՝ Գերշ. Տ. Ասողիկ Եպս. Ղազարեան. Փոխ. Տեսուչ՝ Հոգշ. Տ. Վրթանէս Արղ. Գալայճեան։

Յոպպէի Վանուց Տեսուչ և Իսրայէլի Հայոց Հոգ. Հովիւ՝ Հոգշ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան. Տեսչի օգնական և ժամարար՝ Հոգշ. Տ. Եղնիկ Արղ. Զավտարեան։

Դարպասընկալներ՝ Հոգշ. Տ. Հայկազն Վրդ. Պայրամեան և Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։

Ս. Տեղեաց Դիւանի անդամներ՝ Հոգշ. Տ. Տ. Փառէն Արղ. Աւետիքեան և Վրթանէս Արղ. Գալայճեան։

Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Բապուճեան։

Կալուածոց Տեսուչ և առժ. Աւագ Թարգման՝ Հոգշ. Տ. Յուսիկ Արղ. Պաղտասեան։

Հանդերձապետ, Շորապետ և Հիւրընկալ՝ Հոգշ. Տ. Գեղամ Արղ. Զաքարեան։

Գանձապետ՝ Հոգշ. Տ. Փառէն Արղ. Աւետիքեան։

Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Պատարագիչներ՝ Հոգշ. Տ. Տ. Արշակ Արղ. Խաչատուրեան և Ժիրայր Արղ. Թաշճեան։

Կազմուեցաւ նաև Ուխտաւորաց Ընդունելութեան Յանձնախումբ մը, որուն անդամներն են Հոգշ. Տ. Տ. Հայկազն և Յակոբ վարդապետներ և Յուսիկ, Գեղամ և Փառէն աբեղաներ։

ՍԻՈՆ շնորհաւորելով ամէնքը կը մաղթէ կարողութիւն և լաւագոյն յաջողութիւններ։

## ՏԻԿԻՆ ԶԱՐՈՒՀԻ ՀԱՄԱԼԵԱՆ

*ՍԻՈՆ ցաւով կ'արձանագրէ Ս. Աթոռոյս Հոգշ. Միաբաններէն Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեանի (ծնեալ Համալեան) մօրը, Զարուհի Համալեանի մահը, որ տեղի ունեցած է Յունուար 8ին, Պաղտատի մէջ: Հանգուցեալը երկար տարիներ ծառայած է իբրեւ ուսուցչուհի: Եղած է Հալէպի Անկելանոցին հիմնադիրներէն մին, եւ երկար տարիներ ալ նոյն հաստատութեան Վարչութեան անդամ: Ցաճախ եռանդով մասնակցած է Եկեղեցւոյ ի նպաստ կատարուած ձեռնարկներու եւ ջանացած է օգտակար ըլլալ իր կարողութեան չափով:*

*Մեր խորին ցաւակցութիւնները իր յարգելի ամուսնոյն՝ Տիար Մանուէլ Համալեանի եւ իր զաւակաց, իրենց այս դառն կորստեան առթիւ:*

digitised by A.R.A.R.@